

պատուների դատարանում՝ դատուելը և դրամատուների և
փոստի անկախութիւնը, այս մենաշնորհումներն և արտօ-
նութիւնները օտարահպատակները սուլթանների երկրուժ
վայելում էին շատ հին ժամ ժամանակից։ Մեծ պետութիւն-
ներն արդէն բողոքել են այս վերացման առթիւ և հաւա-
նօրէն արգելք կը լինեն Թիւրքիային ի կատար ածելու իւր
յայտարարութիւնը վերացման համար, չնայած, որ Թիւր-
քիան յայտնել է, թէ պատերազմ կը յայտարարէ այն պե-
տութեան, որ չի ընդունէ կապիտուլֆացիաների վերացումը։
Դրա հետ միաժամանակ Թիւրքիան ետ է կանչել Հայկա-
կան վիլայէթների համար նշանակուած երկու ընդհանուր
քննիչներին՝ Հօֆին և Վեսթենիկին և նրանց գործակից-
ներին։ Այժմ էլ Բ. Դուան կարգադրութեամբ Դարդանէլի-
նեղուցը փակուած է բոլոր տեսակի օտարերկրեայ նաւերի,
նոյն իսկ առևտրական և մարդատար շոգենաւերի համար։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Թիւրքիան, հաւա-
տարիմ իւր հին քաղաքականութեանը և հանգամանքներից
օգտուելու իւր հմտութեանը, ի չիք է դարձնում իրեն ան-
հաճոյ հաստատութիւնները։ Թէ ինչ կը լինի միւս ամսին՝
այդ կը տեսնենք։

Գ. Տէր-Ռութինեան.

16 սեպտեմբերի 1914,

Ս. կջմիածին։

Բ. Ե. Լ. Գ. Ի. Ա.

Դերմանիան որոշել էր մտնել Ֆրանսիա և պաշարել
Փարիզը, անցնելով Բելգիայի միջով, ի նկատի առնելով,
որ չափազանց գժուարին կը լինէր յարձակուել Ֆրանսիայի
վրայ նորա արևելեան կողմից, որտեղ կան մի շարք ամուռ
քերդեր, որոնց գրաւելու համար մեծ կորուստ և ժամա-
նակ է հարկաւոր։ Դերմանիան յոյս ունէր՝ որ Բելգիայի
կառավարութիւնը ոչ մի ընդդիմագրութիւն չի ցոյց տալ,
եթէ իւր գօրքերը նորա նողով անցկացնէր գէպի Ֆրան-
սիա։ Բայց գերմանացիների յօյսերը չարդարացան և Բել-
գիան, իրու չեզոք թագաւորութիւն, չկամեցաւ ուսնակու-
անել արդարութիւնը և ի վեաս իւր մեծ հարևան Ֆրան-

սիայի թոյլ տալ գերմանացոց անցնել իւր հողով դէպի ֆրանսիա։ Երբ Գերմանիան Բելգիայից այդ թոյլառութիւնը չստացաւ՝ դիմեց զէնքի և նախ սկսեց իւր կոխուր բելգիացիների դէմ։ Բելգիական ազնիւ ժողովութզը, որ ոչ մի նպատակ և շահ չունէր կոռուելու գերմանացիների հետ, ստիպուած եղաւ յանուն արդարութեան զէնք վերցնել և պատերազմել գերմանացիների դէմ։ Կոփեն անհաւասար էր՝ փոքրիկ Բելգիան ստիպուած էր կոռուելու հզօր Գերմանիայի դէմ։ Այդ կոռում, որի մանրամանութիւնը այստեղ նպատակ չունենք տալու, արդարութեան և ոչ թէ երկիր նուաճելու նպատակով կոռուող Բելգիան յիրակիցոյց տուեց արտասովոր հերոսութիւն։ Եւրոպական ներկայ պատերազմի պատմութեան մէջ ամենափայլուն է ջերը նուիրուած կըլինին Բելգիայի հերոս ժողովրդին՝ որ իւր ընդդիմառութեամբ ամենամեծ չափով նպաստեց երեւակ համաձայնութեան պետութեանց յաջողութեան ընդդէմ Գերմանիայի։ Ահա այդ հերոս ժողովրդի մասին է որ կամենում ենք համառօտակի տեղեկութիւն տալ «Արարատ»ի ընթերցողներին։

Բելգիայի սահմաններն են՝ հարաւից ֆրանսիան, արևմուտքից գերմանական ծովը, հիւսիսից Հոլանդիան իսկ արևելքից Լուքսեմբուրգի դքսութիւնը և Գերմանիան։ Բելգիայի մայրաքաղաքն է Բրիւսել։ Տարածութիւնն է երկրի 29,456 քառակուսի կիլոմետր։ Համաձայն 1897 թ. վիճակագրութեան Բելգիան ունի 6,586,593 մարդ։ Հստեղութիւն Բելգիայի ժողովուրդը բաժանւում է երկու մասի 45,2⁹/₀-ը գերմանական ցեղին պատկանող Փլամանդներ են՝ որ խօսում է ֆրանսերէն, իսկ 40,⁹/₀-ը վալօն—կելտական ցեղն է, որ խօսում է ֆրանսերէն։ Իսկ մնացած մասը օտարազգիներ են՝ հոլանդացիներ 56,306, ֆրանսիացիներ 45,430, գերմանացիներ 47,338։ Պետական լեզուն համարւում է ֆրանսերէնը և առհասարակ բարձր դասը խօսում է այդ լեզուով։ Ֆլամանդցիները տարբերում են իրենց շէզ մազերով, կապոյտ աշքերով, բարձր հասակով, լայնաթիկունք են և զարգացած մուսկուլներ

ունեն, լռակեաց են, կտորկածուու, և ֆանատիկոս լինելու չափ անձնատուուր են իրենց կրօնին, Վալլօնները—կելտերը սկամազ են, նման ֆրանսիացիներին իրենց կենսուրախ և արագաշարժ բնաւորութեամբ, պատերազմաէր են և շատ աշխատասէր: Կրօնով բոլոր բելգիացիները կաթոլիկներ են, կան մօտ 15,000 բողոքականներ և 3000 հրէաներ: Հոգեոր կարգեր (օրդեն) հաշւում են մինչեւ 160: Տղամարդկանց վանքեր 1896 թ. եղել է 244 հատ 4858 վանականներով, և 1498 կանանց վանքեր 26,228 կոյսերով: Դասաւութեամբ զբաղուել են 1301 վանական և 9398 կոյս: Բոլոր վանքերի կարողութիւնը հասնում է մինչեւ 1657 միլիոն ֆրանկ: Փողովրդական կրթութիւնը ամբողջապէս համարեա գտնուում է հոգևոր իշխանութեան ձեռքում: Կրօնի դասաւութիւնը առաջին տեղն է բոնում: Գոյութիւն ունի 4 համալսարան, որոնցից երկուսը համարւում են պետական և գտնուում են Լիւտուֆիում (Լիեժ) և Գենտում և Երկուսն էլ «ազատ», որոնք են Բրիւկսելում և Լեօվենում*): Բացի համալսարաններից կան վաճառականական բարձրագոյն դպրոց, գիւղատնտեսական և անամսաբուժական դպրոցներ, զինուորական դպրոց, և պիտութեանց ձեմարան (Բրիւկսելում): Պարբերական հրատարակութիւններ 1891 թ. եղել է 390, որոնց թւում 75-ը օրաթերթ:

Հողագործութեամբ զբաղւում են ամբողջ Բելգիայի ժողովրդի ^{4/5} մասը:

Հանքերի կողմից հարուստ է քարածուխով, երկաթով, մարմարիոնով և այլ հանքերով: Կան բազմաթիւ գործարաններ:

Բելգիան ունի լնդարձակ վաճառականութիւն ծաղկած վիճակում:

Պետական կազմակերպութեան կողմից Բելգիան ունի սահմանադրական միապետական իշխանութիւն, ժառանգ-

*) Այս այն բաղաքն է՝ որ ներկայ պատերազմում գերմանացիները բարբարոսաբար այրել են տեղական համալսարանի գրադարանը, որի մէջ եղել են Բրիստուից չորս դար առաջ արամէական լեզուով գրուած ձեռագիր նշանաւոր Հին Կտակարանը և 75 հազար հատոր նշանաւոր գրքեր:

ները արական ցեղից և անդրանիկին է պատկանում գահի իրաւունքը: Սահմանադրութիւնը հաշւում է 1831 թ. փետրվարի 7.ից, վերջին անգամ փոփոխութեան է ենթարկուել 1893 թուի սեպտ. 7.ին: Այդ սահմանադրութիւնը օրէնքի առաջ ապահովում է քաղաքացիների բոլորի ազատութիւնը դաւանութեան, դասաւանդման, մամուլի և ժողովների, քաղաքացիական պարտադիր պսակի և այլն: Օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է կայսեր և ժողովրդական ներկայացուցիչներին՝ դեպուտատների պալատին և սենատին: Ընտրական իրաւունքը սահմանուել է 1893 թ. օրէնքով:

Բարձրագոյն կառավարութեան օրդանը համարւում է նախարարների ժողովը՝ որ քաղացած է 7 նախարարից և զլխաւոր քարտուղարից:

Զինուորական ծառայութիւնը լինում է վիճակով և կամաւոր, տևում է 3-4 տարի: Երկրը բաժանուած է 4 զինուորական շրջանների: Զօրքերի թիւն է 97 բատալիոն ոտաւոր, 48 ծիաւոր, 60 թնդանօթ, բատալիոն, ընդամենայն 142000 մարդ:

Համաձայն միջազգային իրաւունքի Բելգիան մետապէս պէտք է համարուի չեզոք պիտութիւն:

Եւ ահա այսօր Գերմանիան ուղիւ տակ տալով միջազգային իրաւունքը՝ իւր զօրքերը ֆրանսիայի հիւսիսային կողմն անցկացնելու համար Բելգիայի հողով՝ բոլորովին ուղիւ տակ տուեց այդ երկրի մի շարք գեղեցիկ քաղաքները՝ մի քանիսները թալանի ենթարկուեցին գերմանացիների ձեռքով և մի քանիսներն հրոյ ճարակ դարձան, իսկ Անտվերպէնը՝ ամուր բերգերով պաշտպանուած՝ մնում է առանց անձնատուր լինելու: Բրիւկսելն՝ թէև թշնամու ձեռքն ընկաւ՝ բայց շնորհիւ Ամերիկայի դեսպանի գերմանացիները չհամարձակուեցին զոհ դարձնել իրենց բարրարոսութիւններին *):

Բ. վ. Յ.

*.) Բելգիայի մասին տեղեկութիւններ քաղեցինք Բольшая Энцикл. 3 հատորից: